



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ՇԵՆՅՈՄ
ՆԱԽԱՐԵՎՈՒՄԻ ՆԱԳՐՈՒՄԻ
ՎՃԻՐՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆ



ՆԱԽԱՐԵՎՈՒՄԻ ՆՈՒՇԱԾՈՒՄԻ
ԹԱՅՈՒՄՈՒԹՅԱՆ, ԲԱԶՄՈՒՐԹՅԱՆ ԵՎ
ՆԱԽՅՈՒՄԻ ՇԵՆՅՈՄ

Հանձնաժողովի՝ ընտրողների գրանցումն իրականացնող անդամի գործառույթները

- ▶ Ընտրողին խնդրե՛ք ներկայացնել. Կրաստանի քաղաքացու ինքնությունը հաստատող վկայականը կամ Կրաստանի քաղաքացու անձնագիրը:
- ▶ Ստուգե՛ք, թե ընդգրկված է արդյոք ընտրողը ընտրողների միասնական կամ հատուկ ցուցակի մեջ, և համեմատե՛ք ընտրողի անձնական համարը ընտրողների ցուցակում առկա համարի հետ:
- ▶ Ստուգե՛ք ներկայացված փաստաթղթում առկա ընտրողի հաշվառման տվյալների և ընտրողների ցուցակում ընդգրկված տվյալների համապատասխանությունը:

Նկատի՛ ունեցեք.

- ✓ Ընտրողը քվեարկությանը մասնակցում է, եթե ընտրողների համապատասխան ցուցակում Կրաստանի քաղաքացու անձնական համարի, սեռի և լուսանկարի հետ մեկտեղ, ամբողջությամբ համապատասխանում են ցուցակում առկա տվյալներից (անուն, ազգանուն, ծննդյան ամիս, ամսաթիվ, տարեթիվ, հասցե) գոնե երեքը:
- ✓ Եթե ընտրողի դեմքը և ներկայացված փաստաթղթում կամ ընտրողների ցուցակում առկա լուսանկարը միմյանց անհամապատասխան համարեք, տվյալ անհամապատասխանությունը հաստատելու հարցով դիմե՛ք հանձնաժողովի նախագահին և սպասե՛ք նրա ցուցումներին: Եթե հանձնաժողովի նախագահը չի հաստատի անհամապատասխանությունը, իրավունք ունեք քվեարկության օրվա գործավարության մատյանում նշել Ձեր առանձնահատուկ կարծիքը, ինչը հանձնաժողովի քարտուղարի հետ հաստատում էք ստորագրություններով: Անկախ ընտրողի դեմքը և ներկայացված անձը հաստատող փաստաթղթում/ընտրողների ցուցակում առկա լուսանկարը անհամապատասխան համարելուց, ընտրողը մասնակցում է քվեարկությանը:

- ▶ Ընտրողին արե՛ք նշմարում աջ ձեռքի բթամատի կամ ցուցամատի եղունգի վրա, եթե տվյալ գործողության կատարումն անհնար է՝ աջ ձեռքի մյուս մատների վրա, եթե դա ևս անհնար է, նույն կարգով՝ ձախ ձեռքի վրա:

Նկատի՛ ունեցեք. Նշմարման ընթացակարգ անցնելուց հրաժարվելու դեպքում, ընտրողն իրավունք չունի մասնակցելու քվեարկությանը, և նրան չի տրամադրվում քվեաթերթիկ:

- ▶ Ստորագրե՛ք ընտրողների միասնական ցուցակի համապատասխան սյունակում, ընտրողի ազգանվան երկայնքով:
- ▶ Խնդրե՛ք ընտրողին ընտրացուցակում իր ազգանվան երկայնքով ստորագրությամբ հաստատել քվեաթերթիկ/քվեաթերթիկներ ստանալը:

Նկատի՛ ունեցեք. Եթե քվեարկության ընթացքում պարզվի, որ ընտրողը ընտրացուցակում ստորագրել է այլ ընտրողի ազգանվան դիմաց գտնվող սյունակում, նման դեպքում ընտրողին, որի ազգանվան դիմաց արձանագրված է ստորագրությունը, պետք է ցուցում տաք ստորագրելու նույն սյունակում: Միևնույն ժամանակ, նշվածի վերաբերյալ պետք է բացատրագիր գրեք (ընտրողի անվան, ազգանվան և ցուցակում նրա հերթական համարի մատնանշմամբ):

- ▶ Քվեաթերթիկ տրամադրելիս՝ ստորագրե՛ք դրա դարձերեսին համապատասխան սյունակում և հաստատե՛ք գրանցում իրականացնողի կնիքով:
- ▶ Ընտրողին փոխանցե՛ք Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված ընտրական քվեաթերթիկը:

Նկատի՛ ունեցեք. Եթե Դուք կամ ընտրողը վնասեք ընտրական քվեաթերթիկը, այդ մասին անհապաղ տեղեկացրե՛ք հանձնաժողովի նախագահին և ընտրողին փոխանցե՛ք նոր (Ձեր կողմից ստորագրված և գրանցումն իրականացնողի կնիքով վավերացված) ընտրական քվեաթերթիկ:

- ▶ Ուղղորդե՛ք ընտրողին դեպի քվեախցիկ:

Նկատի՛ ունեցեք

- ✓ Այն ընտրողը, որը ֆիզիկական վիճակի, մասնավորապես, վերին վերջավորություններ չունենալու պատճառով չի կարողանում ինքնուրույն իրականացնել քվեարկության ընթացակարգերը, չի անցնում նշմարման ընթացակարգը: Ընտրողին ընտրական քվեաթերթիկ փոխանցելիս՝ ընտրողների միասնական ցուցակի «Ընտրողի ստորագրություն» սյունակում պետք է անեք «ֆիզիկական վիճակ» գրառումը և հաստատեք ստորագրությամբ:
- ✓ Երաշխավորվում է, որ ժամը 10:00-ին, 12:00-ին, 15:00-ին և 17:00-ին, առանց քվեարկության գործընթացին խանգարելու, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ վերահաշվեք ընտրողների ցուցակներում ընտրողների ստորագրությունների, Ձեր կողմից տրված ընտրական քվեաթերթիկների քանակները և հանձնաժողովի նախագահին փոխանցված վնասված քվեաթերթիկների քանակը և տվյալները տեղեկացնեք հանձնաժողովի նախագահին: Տրված քվեաթերթիկների թիվը կարելի է որոշել հանձնաժողովի նախագահից ստացած քվեաթերթիկների թիվը ընտրողների գրանցում իրականացնողի մոտ մնացած քվեաթերթիկների հետ համեմատելով:
Եթե տվյալների միջև տարբերություն հայտնաբերվի, անհապաղորեն պետք է բացատրագիր գրեք, պատճառի մատնանշմամբ: Քվեարկությունն ավարտվելուց հետո, հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ, կրկին պետք է վերստուգեք տվյալների ճշգրտությունը: Վերնոշյալ տվյալների ճշտության վերստուգումը պետք է իրականացնեք նաև ընտրողների գրանցում իրականացնողի գործառույթի ժամանակավոր փոխանցման դեպքում:
- ✓ Այն ընտրողը, որին միասնական ցուցակում շնորհված է «գտնվում է արտասահմանում» կամ «հյուպատոսական հաշվառման է» կարգավիճակ, քվեարկությանը մասնակցում է ընդհանուր կարգով: